

դունդի), և Յանաւակ (անցատակ): (Չ'կրցանք իմանալ այս յարկերու դասաւորութեան եղանակը, դէպի վար, կամ դէպի վեր):

Տիեզերքը իւր ամբողջութեամբ, ալսինքն՝ երկինքն ու երկերը ի միամին, երեք գլխաւոր մասերու կամ յարկերու կը բաժնուի, որոց առաջինը ընդգետնեայ աշխարհն է, երկորդը՝ ոգեսնի վրայ, ուր մենք կը բնակինք, և երրորդը՝ երկնքի մէջ: Այս երեք յարկերու մէջ այ կան բնակիչներ—մարդիկ, որոնք կ'վրացին և կ'ապրին գլխաւորապէս երկրագործութեամբ, և բոլոր այն գործերով, ինչ որ կը տեսնուին երկրի վրայ: Տարբերութիւնը միայն հագուստի մէջ է, որովհետև վարի յարկի մարդիկի իրենց գօտին ծունդերու վրայ կը կապճն, միջին յարկի մարդիկ—մենք, փորի վերին մասին վրայ, իսկ վերին յարկի մարդիկ՝ որտի վրայ:

Երկիրը՝ զոր գետին կամ գետինք կանուանենք՝ իւր ծովերով ու ցամաք ներով սուրբ է, որպէս Աստուծոյ ձեռաց գործ, ինչպէս երկնքը: Ժողովու բոլը յաճախ երգում կ'ընէ այդ չորս անուններով—«Երկինք, կ'ետինք, ծով, ցամաք վկայ եղնին, որ . . .»: Եւ այս երգումը աւելի հաւատուի, վստահելի է, քան եթէ Աստուծոյ անունով եղած ըլլար

Հ Բ Ե Ց Ց Ա Կ Ն Ե Բ

Սատուած՝ զինքը փառաբաններու և իրան Յառաջելու համար լոյսէն հրեշտակներ ստեղծեց: Հրեշտակները թեւալոր, մարդակերպ արարածներ են, միամիտ և արդար, մեր աշքին անտեսանելի, բայց եթէ ուզեն իրենց սիրած մարդու աշքին կ'երեւին մանուկի և յաճախ «ճերմակ մուրուք» ծերունիի կերպարանքով Ասոնց գլխաւորները, Սերովրէք և Քերովրէք, իրենց թեւերու վրայ բռնած ունին Աստուծոյ աթուրը ևսկ միւս հրեշտակները բաժանուած են երկու մասի, մէկ մասը վեցերորդ երկնացն յարկի մէջ կը բնակի, առանց ուրիշ տեղափոխուելու, և շարունակ ՇԱՍՏՈՒԱԾ կը փառաբաննենք: իսկ միւս մասը ծառայութեան մէջ կը գտնուի, երկնքի և երկրի մէջ կը պատին, ել և էջ կ'ընեն, Աստուծոյ հրամանները կը կատարեն, մարդերու Հոգիները «կ'աւանդեն», և կին ժամանակները նահապետներուն մարդարէներուն, առաքեալներուն, հայրապետներուն, և առհասարակ Աստուծոյ սիրած մարդերուն կ'երեւէին, կամ «ճշգրիտ», (ափանատես), և կամ «երազով», առանց թէ ևի, սպիտակ հագուստներով, երիտասարդի կամ ալեորի կերպարանքով, և Աստուծոյ հրամանները կը հաղորդէին:

Այս խումբի—ծառայութեան մէջ գտնուողներու զլիսաւորներն են Գարրիէլ և Միքայէլ հրեշտակապետները, և մասնաւորապէս հո-

գէտը. Հրեշտակներու գլխաւորութեան պաշտօնն ալ ունին, իսկ դատաժամանի օրը - աշխարհի վախճանին՝ ասոնք փող կը հնչեն և մեռածները յարութիւն կառնեն:

Կան ացեալլ պաշտօն ունեցող հրեշտակներ, որոնց մասին ուրիշ առթիւ կը գրենք մանրամասոն: Ցիցնք. ի միջի ալլոց հետևեալները, 1) Պահապան հրեշտակներ, որոնք երկու երկու են իւրաքանչիւր մարդու համար, մէկը «աջ թէկին»¹⁾ կանգնած, միւսը մախնին կը թէկին կոնդողը կը յարդորէ մարդը և կը մզէ դէպի բարին, և ուրախութեամբ իւրձանագրէ իւր ձեռքի տոմարի մէջ անոր բարի գործերը և իւ արբերը, Խոկ մախն թէկի հրեշտակը տիսրութեամբ կ'արձանագրէ իւր ձեռքի տոմարի մէջ այն մարդու չար գործերը ու խօսքերը Մարդու հեւանալէն յետոյ այդ տոմարները երկինք կը տարուին, որպէս զի դատաստանի օրը հաշուին անոր բարի և չար գործերը: 2) Հոգէառ հրեշտակներ, որոց զիխաւորներն են, ինչպէս ըսինք, Գարրիէլ և Միքայէլ, «Գրող» հրեշտակը ման կուգայ մարդերու մէջ, կը նայի անոնց կեանքի տևողութեան ցուցակը, և որուն լրացած ըլլայ՝ կը գրէ իր ցուցակի մէջ, և կը յանձնէ «Հոգէառներուն, որոնք անմիջաղոյն և կ'աւալդեն» անոր հոգին: 3) Կան նաև «Ճահատագրի», 4) «Կիրակմտի», 5) միթութեան մէջ մարդը պաշտպանողը, 6) ցրի մէջ մարդը պաշտպանողը — Կանամտէլ և Կենդանամայիլ, 7) Ծօխա, Ծժիա, Ղամիա, Ծրայի, Ծարայի և այն. օձի և գայլ ու գազանի գէմ կը պաշտպանեն: 8) «Հար նազարի», և «Հար լեզուի» գէմ պաշտպանողներն են՝ հրանիւր, հրափալիլ, հրան, համառան, համակեզ և այն և այն:

Հրեշտակները գեղեցիկատեսիլ, նրբակաղմ, միշտ երիտասարդ, մարդակերպ և թէւաւոր են, աելի արականի հանգամանք ունին, քան իգականի, (թէւ պատկերներու մէջ իգականի երևոյթը կուտան անոնց), ոչ մահ ունին, և ոչ ննունդ, ոչ տկարութիւն, և ոչ մարմնական անում, ոչ կուտեն և ոչ կը խմեն, որովհետև կարիք չին գդար, հագնուած չեն, որովհետև լուսապատ են, թէւ մարդերու աչքին հագնուած կ'երեն ին:

¹⁾ Մարդերու ուսուկըն «թէմ» կ'ըսեն: